ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2019 թվականի N 7-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի N 14-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. 2019 թվականի փետրվարի 8-ին, ժամը՝ 12:00-ին, Գետամեջի համայնքապետարանի շենքում հրավիրել հանրային բաց լսումներ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամ՝ Ռուզաննա Մուրադի Սարգսյանին:
4. Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Անդրանիկի Սարգսյանին՝
1) համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Գետամեջ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
2) համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակել սույն հանրային քննարկումներին վերաբերող իրավական ակտերի նախագծերը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2019 թվականի հունվարի 25
գ.Գետամեջ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Գետամեջ համայնքի ղեկավարի 2019 թվականի

հունվարի 25-ի N 7-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 14-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2019 թվականի փետրվարի 8-ին ժամը՝ 12:00-ին Գետամեջի համայնքապետարանի շենքում կկայանա հանրային բաց լսումներ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ: Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Ձեր առաջարկություններն ու դիտողությունները կարող եք ուղարկել getamej.kotayq@mta.gov.am կամ getamejmc@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեներով, ինչպես նաև կարող եք գրավոր ներկայացնել աշխատակազմին:

Գետամեջ համայնքի 2018 թվականի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունների նախագծերին կարող եք ծանոթանալ www.getamej.am ինտերնետային կայքում՝ «Հաշվետվություններ» բաժնում: